

«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/3

14 փետրվարի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 25.01.2013թ-ի նիստում քննության է առնվել «ԵՎԱՆՏ Գրուպ» ՍՊԸ 18.01.2013թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 10.01.2013թ. թիվ 1003120 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն չեղյալ է համարվել վերոգրյալ ստուգման ակտի 5-րդ կետը: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.07.2012թ. թիվ 1003120 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «ԵՎԱՆՏ Գրուպ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 10.01.2013թ-ին կազմվել է թիվ 1003120 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 4.257.952 դրամ:

«ԵՎԱՆՏ Գրուպ» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

Ստուգման ակտի 1-ին կետի վերաբերյալ.

Ինչպես նշված է ստուգման ակտում՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են եկամտի ստացման հետ կապված ծախսերը: Սակայն օրենքի վերը նշված կետում խոսքը վերաբերում է ոչ թե եկամտի ստացման հետ կապված ծախսերին, այլ համախառն եկամտի ստացման հետ կապված ծախսերին, որը բոլոր եկամուտների հանրագումարն է:

Հաշվի չեն առնված նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը, համաձայն որոնց ռեզիդենտի ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (վարկերի և այլ փոխառությունների տոկոսներ, զույքի երկարատև վարձակալության դիմաց տոկոսներ և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են: Ընդ որում՝ նշված ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում:

Ելնելով նշվածից՝ ստուգման ակտի 1-ին կետի առաջին պարբերությունը չի բխում ՀՀ գործող հարկային օրենսդրության պահանջներից:

Ստուգման ակտի 5-րդ կետի վերաբերյալ.

1) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է 3 պայմաններից որևէ մեկի ապահովումը, դրանք են՝

1. կազմակերպությունը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և/կամ գրանցումներին վերաբերող) սահմանված փաստաթղթերը, կամ՝

2. կազմակերպությունը այդ փաստաթղթերը վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ՝

3. կազմակերպությունը ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել կազմակերպության հարկային պարտավորությունը:

Տվյալ դեպքում կազմակերպությունը ներկայացրել է հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման սահմանված փաստաթղթերը, կազմակերպությունը այդ փաստաթղթերը վարում է սահմանված կարգով, ակնհայտ կեղծ տվյալներ չի մտցրել հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով հնարավոր է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել կազմակերպության հարկային պարտավորությունները:

2) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է՝

- ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են իրական արժեքից էականորեն ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ նույն օրենքին համապատասխան որոշվող մեծությունը (գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը), իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը (գործարքի իրական արժեքը)... (2009–2011թ.թ. գործող խմբագրություն)։

- ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20%-ով և ավելի ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող նույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80%-ը կազմող մեծությունը... (2012թ. գործող խմբագրություն)։

Ստուգման ակտը գրվել է <2009թ. դեկտեմբեր-2011թ.> ժամանակաշրջանի համար և տվյալ դեպքում անհասկանալի է, թե նշված եղանակներից որն է օգտագործվել։ Եթե համեմատվել են կազմակերպության կողմից վաճառված ապրանքների մանրածախ և մեծածախ գները, ապա դրանք չեն կարող համարվել <համեմատելի>, ավելին՝ տվյալ դեպքում գործարար շրջանակներին համապատասխան կազմակերպության մանրածախ գները բարձր են մեծածախ գներից։ Հարկ է նշել, որ մեծածախ գների մասով <<արկերի մասին>> << օրենքի 22-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն, քանի որ գործարքի երկու կողմերն հաստատել են այն հանգամանքը, որ գործարքը կատարվել է այնպես, ինչպես այն եշված է երկկողմանի կազմված փաստաթղթում և, հետևաբար՝ ապահովված չեն <<արկերի մասին>> << օրենքի 22-րդ հոդվածով սահմանված՝ վերը նշված 3 պայմանները։

Եթե համեմատվել են այլ տնտեսավարող սուբյեկտների մանրածախ և մեծածախ գները, ապա պետք է ներկայացվեն դրանց կիրառման հանգամանքները, որպեսզի գնահատել դրանց համապատասխանեցումը <համեմատելի հանգամանքներ> հասկացությանը։

Բացի այդ, մինչև 2012թ. գործող խմբագրությամբ, անորոշ է <էականորեն ցածր գին> հասկացությունը (01.01.2012թ.-ից սկսած օրենքում նշվել է շեղման կոնկրետ չափ՝ 20%), ինչը տարածայնությունների տեղիք է տալիս։ Այստեղ հարկ է հաշվի առնել <<արկերի մասին>> << օրենքի 2-րդ հոդվածի դրույթները։

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ակտի 5-րդ կետը ևս չի բխում << գործող հարկային օրենսդրության պահանջներից։

Նաև հարկ է նշել, որ մեր կազմակերպությունը հանդիսանում է ներմուծող-վերավաճառող կազմակերպություն և ներմուծված ապրանքները հիմնականում մաքսազերցվում են Մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված կարգով (մաքսային արժեքի որոշումը գործարքի գնի մեթոդով)։

Ստուգման ակտի 16-րդ կետի վերաբերյալ.

Ինչպես նշված է ակտում՝ թվով 3 աշխատակիցներ << օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէին (բացակայում էր նրանց հետ կնքված գրավոր պայմանագիրը)։ Ակտում հղում որևէ փաստաթղթի վրա չի կատարվում, ինչից ելնելով անհասկանալի է, թե որ ժամանակահատվածի մասին է խոսքը, եթե հաշվի առնել, որ նշված աշխատակիցների հետ աշխատանքի ընդունման իրավական ակտերն ընդունված են 01.04.2012թ.-ին և 02.05.2012թ.-ին։ Իսկ Վիգեն Պողոսյանը 01.09.2012թ.-ին ազատվել է աշխատանքից։

Զգրանցված աշխատողների համար սոցիալական վճարի 180.000 դրամ գումարն առաջադրվել է 10.01.2013թ.-ին, այն դեպքում, երբ ստուգման ավարտը եղել է 26.12.2012թ.-ը։ Բացի դրանից, եթե 10.01.2013թ.-ը լիներ ստուգման ժամանակաշրջանի սահմաններում, արդյոք եկամտային հարկի գործողության պայմաններում պիտի առաջադրվեր սոցիալական վճար։

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ստուգման ակտի 16-րդ կետը ևս չի բխում << գործող հարկային օրենսդրության պահանջներից։

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ստուգման ակտի 1-ին կետի վերաբերյալ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսչություն ներկայացրած 2011 թ-ի շահութահարկի հաշվարկի և հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող ծախսերը հաստատող փաստաթղթերի տվյալների համադրումից պարզվել է, որ ընկերությունը 2011 թ-ի համախառն եկամտից նվազեցրել է համախառն եկամտի ստացման հետ կապ չունեցող ծախսեր՝ վարկի տոկոսներ, գումարով 1.664.400 դրամ: Խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի հետևանքով հարկային վնասը ավել է ցույց տրվել 1.664.400 դրամով: Արդյունքում կիրառվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի դրույթները և լրացուցիչ գանձման է առաջադրվել 332.880 դրամ:

Քննարկվող դեպքում ընկերության կողմից «ԱԿԲԱ» բանկից պարբերաբար ստացվել են վարկային միջոցներ և դրանց որոշ մասը փոխառության տեսքով տրամադրվել է «Մոդեմաքս» ՍՊԸ-ին: Ընդ որում, «Մոդեմաքս» ՍՊԸ-ին տրամադրվող փոխառությունները եղել են անտոկոս:

Հանձնաժողովը գտնում է, որ ղեկավարվելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, որի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, հետևապես ընկերության կողմից ներգրավված վարկային միջոցների գծով վարկի տոկոսները՝ գումարով 1.664.400 դրամ, 2011թ-ի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա չէին:

Ստուգման ակտի 5-րդ կետի վերաբերյալ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ստուգվող ժամանակաշրջանում ընկերությունը զբաղվել է մանրա-մեծածախ առևտրով, որոշ դեպքերում մեծածախ ապրանքները իրացրել է իր կողմից վաճառվող նույն ապրանքների մանրածախ վաճառքի գներից էականորեն ցածր գներով, որով խախտել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, այն է՝ ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների համար սովորականի համեմատ կիրառվում են իրական արժեքից էականորեն ցածր գներ հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող սույն օրենքին համապատասխան որոշվող մեծությունը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի, ՀՀ կառավարության 1998թ-ի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգի, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի կողմից հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից հաշվարկելու վերաբերյալ 27.12.2012թ-ի թիվ 05-1003120 որոշման, ընկերության կողմից նույնանման ապրանքները մեծածախ վաճառքի գներով վաճառվել է մանրածախ գներից էականորեն ցածր գներով: Արդյունքում ընկերության կողմից ստուգվող ժամանակաշրջանում պակաս ԱԱՀ է հաշվարկվել գումարով 2765427 դրամի չափով:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 30.1 հոդվածների, «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի դրույթները ԱԱՀ-ից լրացուցիչ ենթակա է գանձման բյուջե ընդամենը 3704785 դրամ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ստուգման ակտի 5-րդ կետով արձանագրված խախտմանն առնչվող նյութերն ու ապացույցները գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթը տվյալ դեպքում կիրառելի չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն. «Եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կուպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ...»:

Վերը նշված նորմի մեկնաբանմամբ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ կառավարության 18.09.1998թ. թիվ 580 որոշմամբ հաստատված կարգը կիրառելու՝ հարկվող օբյեկտը և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից հաշվարկելու համար պարտադիր պայման է հանդիսանում, որպեսզի ընկերության կողմից կատարված լինեն նշված խախտումները և առկա լինի այդ խախտումների հետևանքով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պարտավորությունների հաշվարկման անհնարինության հանգամանքը:

Տվյալ դեպքում չեն հիմնավորվել (ապացուցվել), ինչպես նաև չեն նշվել ընկերության կողմից հաշվառման փաստաթղթեր չներկայացնելու, դրանք կոպիտ խախտումներով վարելու կամ հարկային տեսչություն ներկայացված հարկային հաշվարկներում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելու փաստերը, չի հիմնավորվել հարկային պարտավորությունները սահմանված կարգով հաշվարկելու անհնարինությունը:

Որպես հիմնավորում ստուգման ակտի 5-րդ կետում ընդամենը նշվել է, որ որոշ դեպքերում մեծածախ ապրանքներն իրացվել է իր կողմից վաճառվող նույն ապրանքների մանրածախ վաճառքի գներից էականորեն ցածր գներով: Հանձնաժողովը գտնում է, որ նշվածը չի կարող համարվել ՀՀ արկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հիմք կամ հիմնավորում, քանի որ մեծածախ ապրանքներն վաճառվող նույն ապրանքների մանրածախ վաճառքի գներից ցածր գներով իրացնելը որևէ իրավական նորմի խախտում չի հանդիսանում, նման արգելք կամ սահմանափակում որևէ իրավական ակտով սահմանված չէ: Բացի այդ, ապրանքների մեծածախ վաճառքն ընկերության կողմից իրականացվել է սահմանված կարգով դուրս գրված հաշիվ-ապրանքագրերի միջոցով և չի արձանագրվել որևէ փաստ, որը կասկածի տակ կղններ հաշիվ-ապրանքագրերում արձանագրված տվյալների ու տեղեկությունների խկությունը:

Հարկ է նշել նաև, որ մեծածախ ապրանքներն վաճառվող նույն ապրանքների մանրածախ վաճառքի գներից ցածր գներով իրացնելու հանգամանքը չի հանգեցնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերի հաշվարկման անհնարինության:

Վերը նշված փաստական հանգամանքների և իրավական հիմքերի հիման վրա Հանձնաժողովը եզրակացնում է, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ՀՀ արկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառվել է նույն իրավանորմով նախատեսված խախտումների բացակայության պայմաններում:

Ստուգման ակտի 16-րդ կետի վերաբերյալ:

Ստուգման ակտի 16-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ թվով 3 աշխատակիցներ՝ Զարուհի Յափունջյանը, Դավիթ Սարգսյանը և Վիգեն Պողոսյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէին: Բացակայում էր նրանց հետ կնքված գրավոր աշխատանքային պայմանագիրը: Արդյունքում ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները խախտելու համար կիրառվել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը և լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 180.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ նշվեց, որ համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 02.03.2012թ-ի թիվ 104 հանձնարարագրի, ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկում իրականացնելու նպատակով ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից ընկերությունում կատարվել է ստուգում: Ստուգման արդյունքում 27.04.2012թ-ին կազմվել է թիվ 104 ստուգման ակտը, որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ խախտվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի և 85-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ ընկերության թվով 3 աշխատակից՝ Զարուհի Յափունջյանը, Դավիթ Սարգսյանը և Վիգեն Պողոսյանը աշխատում էին առանց աշխատանքային պայմանագիր կնքելու և առանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի:

Քննարկվող դեպքում ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգման արդյունքում արձանագրված խախտումը հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 10.01.2013թ. թիվ 1003120 ստուգման ակտի 16-րդ կետի կազմման համար:

Ինչ վերաբերվում է ստուգվող ժամանակաշրջանին, ապա ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.07.2012թ. թիվ 1003120 հանձնարարագրի համաձայն, աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգման ժամանակաշրջանը սահմանվել է 05.09.2009թ-ից մինչև ստուգման ավարտ: Այսինքն, վերոգրյալ խախտումն ընկերության կողմից կատարվել է ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանում:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 10.01.2013թ. թիվ 1003120 ստուգման ակտի 5-րդ կետը:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ՔԱՐՍԵՂՅԱՆ

